



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 17 » 08 2020թ.

№ 08/ԼԱ-303

**Օգոստոսի 10-16-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Օգոստոսի 11-13-ի գիշերը շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն քանակը գրանցվել է 55մմ, Եղվարդում, Գյումրիում՝ 21մմ, մնացած շրջաններում՝ 7-15մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը օգոստոսի 10-12-ին եղել է նորմայի սահմաններում, 13-14-ին՝ ցածր է եղել 1-3, 15-16-ին՝ 3-5 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է օգոստոսի 10-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում դիտվել է +34...+36°C, Սյունիքի հովիտներում, Տավուշում՝ +32...+34°C (Դիլիջան՝ +28°C), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +23...+28°C (Սեմյոնովկա՝ +20°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է օգոստոսի 16-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +7...+12°C (Աշոցք՝ +2°C), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ +14...+17°C (Դիլիջան՝ +9°C), Սյունիքի հովիտներում՝ 16...+20°C:

Օգոստոսի 11-ին Արարատյան դաշտում և Երևանում երեկոյան ժամերին դիտվել է քամու ուժգնացում մինչև 15-20մ/վրկ արագությամբ, պոռթկումները մինչև 24-26մ/վրկ:

Օգոստոսի 13-ին Ապարանում դիտվել է ուժեղ անձրև՝ 31մմ/ 3ժամում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել 1900.72 մ (16.08.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 1սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան